ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ԷՏԱՊԸ

Վ. Մ. ԱՂՈՒԶՈՒՄՅՅԱՆ

Լենինը իր «Կարլ-Մարքս» հոդվածում ընդգծելով տնտեսական գիտության որոշիչ դերը պրոլետարիատի աշխարհայացքում, նշում է, որ տնտեսագիտությունը մարքսիզմի գլխավոր բովանդակությունն է կազմում։

Պաշտպանելով մարքսիզմը և զարգացնելով այն նոր պատմական պայմաններում, Վ. Ի. Լենինը առանձնահատուկ ուշադրություն է նվիրել մարքսիստական քաղաքատնտեսության հարցերին, որովհետև միայն այդ գիտությունն է բացահայտում հասարակական տարբեր տնտեսակարգերի և մեկ տնտեսակարգից հեղափոխականորեն մյուսին անցնելու տնտեսական օրինաչափությունները. միայն մարքսիստական քաղաքատնտեսությունն է բացահայտում հասարակության առաջընթացն արտահայտող արտադրողական ուժերի բնույթին ու մակարդակին արտադրական հարաբերությունների համապատասխանության համընդհանուր տնտեսական օրենքի էությունն ու գործողության մեխանիզմը՝ տարբեր արտադրաեղանակներում։

Լենինի XIX դարի վերջին տասնամյակի բոլոր աշխատությունները հիմնականում տնտեսագիտական բնույթի են։ Առաջին տնտեսագիտական-տեսական հոդվածը՝ «Տնտեսական նոր շարժումները գյուղացիական կյանքում» խորագրով, որը Իլյիչը գրել է 1893 թ. գարնանը Սամարայում, Պոստնիկովի «Հարավ-ռուսական գյուղացիական տնտեսությունը» գրքի առթիվ, առաջին անգամ տպագրվել է միայն 1923 թ.։ Այդ գործում շարադրված հիմնական նյութը օգտագործվել է «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքի 2-րդ գլխում։ Հոդվածում ընդգծվում է գյուղացիության շերտավորման արագացումը Ռուսաստանում կապիտալիզմի ծագմանն ու զարգացմանը համընթաց, երբ արտադրության համար բնորոշ է դառնում վաճառքի համար մթերք արտադրելը. «Գյուղացիության մեջ,— գրում է Լենինը,— տնտեսական շահերի պայքարի ծագման հիմնական պատճառը այնպիսի կարգերի գոյությունն է, որոնց ժամանակ հասարակական արտադրության կարգավորիչը շուկան է»[1]։

Կրասինի «Շուկաների հարցը» ռեֆերատը Պետերբուրգում «ժերունիների» խմբակի ժողովում քննարկելու առթիվ 1893 թ. աշնանը գրվեց «Այսպես կոչված շուկաների հարցի առթիվ» հոյակապ աշխատությունը, որը հրատարակվել է միայն 1937 թ.։

Լենինը տնտեսագիտական քննադատության է ենթարկում նարոդնիկության տեսությունը և պաշտպանում ու զարգացնում է Մարքսի դրույթները վերարտադրության հարցերում։ Հաշվի առնելով նաև կապիտալիզմի զարգացման հետևանքով կապիտալի օրգանական կազմի աճը, Լենինը կազմել է վերարտադրության իր սխեման, որից հետևում է, որ վերարտադրության ժա-

---

1 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 1, էջ 77։

մանակ հավելյալ արժեքի կապիտալացումը պայմանավորում է ժողովրդի աղքատացումը, ըստ որում ոչ միայն առաջին ստորաբաժանումն է արագ աճում երկրորդ ստորաբաժանման և ամբողջ կապիտալի համեմատությամբ, այլև ավելի արագ է տեղի ունենում հաստատուն կապիտալի կուտակումը և արտադրության միջոցների արտադրության աճը առաջին ստորաբաժանման զարգացման համար։ Այստեղ Լենինը պաշտպանում ու զարգացնում է Մարքսի՝ կապիտալի կուտակման համընդհանրական օրենքի ելակետային դրույթները։

1894 թ. ամռանը Լենինը գրեց իր «Ինչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ դեմոկրատների դեմ»՝ «Русское богатство»-ի դեմ ուղղված հոչակավոր աշխատությունը, որը տպվեց հեկտոգրաֆով և արագորեն տարածվեց։ Լիբերալ նարոդնիկներ Վորոնցովին, Միխայլովսկուն, Յուժակովին ու Կրիվենկոյին մարքսիզմի դիրքերից հետևողական և անողոք գիտական քննադատության ենթարկելով, Լենինը պաշտպանում և ռուսական իրականությանը համապատասխան կոնկրետացնում ու զարգացնում է մարքսիզմը, դրանով իսկ ձեռնարկելով Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժման փիլիսոփայական ու տեսական տնտեսագիտական սկզբունքների մշակումը։ 1895 թ. սկզբին Պետերբուրգում գրած «Նարոդնիկության տնտեսական բովանդակությունն ու նրա քննադատությունը Պ. Ստրուվեի գրքում» հոդվածում (որը գրված է Ստրուվեի «Քննադատական դիտողություններ Ռուսաստանի տնտեսական զարգացման հարցի շուրջը» գրքի առթիվ) մերկացնելով լեգալ մարքսիզմի բուրժուական էությունը քաղաքատնտեսության ու փիլիսոփայական հարցերում, Վ. Ի. Լենինը բացահայտում է բուրժուական գրականության մեջ մարքսիզմի աղճատումների քաղաքական վտանգավորությունը ռուսական և միջազգային բանվորական շարժման համար։

1896 թ. հրատարակվեց «Ֆրիդրիխ Էնգելս» հոդվածը, որտեղ տրված է Մարքսի անզուգական զինակցի, գիտական կոմունիզմի հիմնադիրներից մեկի, Մարքսից հետո մինչև Լենինը ընկած ժամանակաշրջանում միջազգային պրոլետարական հեղափոխության առաջնորդի և սոցիալիստական մտքի տիտանի գործունեության քաղաքական ու գիտական ամբողջական գնահատականը։

1897 թ. հրատարակված «Տնտեսական ռոմանտիզմի բնութագրման շուրջը» աշխատությունում բացահայտված է սիսմոնդիականների տնտեսագիտական հայացքների մանր բուրժուական էությունը և տրված է նրանց քաղաքական գնահատականը։

XIX դարի վերջին տասնամյակում Լենինի տնտեսագիտական ու քաղաքական գործունեության ընդհանրացումն է հանդիսանում 1896—1899 թթ. մշակված և 1899 թ. հրատարակված «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գիրքը, որը մարքսիզմի պաշտպանությունն ու զարգացումն է նոր ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան։

Հսկայական վիճակագրական փաստական նյութի հիման վրա տնտեսագիտական վերլուծման ենթարկելով Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման էական գծերն ու առանձնահատկությունները, Լենինը անհերքելիորեն հիմնավորում է, որ Ռուսաստանը ապրում է բուրժուա-դեմոկրատական հեղափոխության նախօրյակը։ Որոշելով այդ հեղափոխության նպատակն ու շարժիչ ուժերը, նա բացահայտում է բանվոր դասակարգի գլխավոր դերի տնտե-

ական հիմքերը, մշակում է քանվորագյուղացիական դաշինքի և հեղափոխության մեջ պրոլետարիատի հեգեմոն դերի սկզբունքային դրույթները։ Այս հանճարեղ երկը մարքսիզմի ստեղծագործական կիրառումն է Ռուսաստանում, նրանում հիմնավորված է կոմունիստական հեղափոխության անխուսափելիությունը ցարական Ռուսաստանում և ռուսական բանվոր դասակարգի ավանգարդային դերը միջազգային սոցիալիստական շարժման մեջ։ Այս գրքում տրված է կապիտալիզմի ժամանակ ներքին շուկայի զարգացման լենինյան վերլուծությունը. ապրանքային արտադրության և առևտրի զարգացումը տանում է դեպի ներքին շուկայի ձևավորումը, որը միաժամանակ նշանավորում է պարզ ապրանքային արտադրության վերաճումը կապիտալիստական արտադրության։ Արտադրողական ուժերի զարգացման հետևանքով տեղի է ունենում անցումը բնատնտեսությունից դեպի ապրանքային արտադրություն, աշխատանքի հասարակական բաժանման զարգացումն ու խորացումը իր հետ բերում է արտադրողների մասնագիտացում, իսկ մրցակցությունը նպաստում է քչերի հարստացմանը։ Այս պայմաններում ծագում ու ծավալվում են կապիտալիստական արտադրական հարաբերությունները քայքայվող ֆեոդալիզմի ընդերքում։

Հասարակության առաջընթացը պահանջում է արտադրության ընդլայնված կրկնություն, իսկ մանր ապրանքային արտադրությունը ընդունակ չէ սիստեմատիկորեն ընդլայնված վերարտադրությամբ զարգանալու, որը հետևանք է տեխնիկական հետամնացության, արտադրողական ուժերի ցածր մակարդակի, արտադրության միջոցների ոչ ռացիոնալ օգտագործման, մանրության ու ցրվածության։

Արտադրության խոշորացումը տեղի է ունենում մանր ու խոշոր ձեռնարկությունների օրըստօրե սրվող մրցակցության պայմաններում, որը խորացնում է առաջինների քայքայման պրոցեսը։ Լենինը քննադատության է ենթարկում նարոդնիկների տնտեսագիտական հայացքները, ընդգծելով, որ ներքին շուկայի առաջացման դասակարգային բովանդակությունը աշխատուժ յուրահատուկ ապրանքը վաճառողի՝ պրոլետարիատի առաջացումն է և այդ ապրանք արտադրող ապրանքը գնողի՝ բուրժուազիայի ձևավորումը։ Նա ցույց է տալիս, որ նարոդնիկները, տեսնելով գյուղացիական մանր արտադրության քայքայման պրոցեսը, չտեսան նորի առաջացումը և հանգեցին Ռուսաստանում կապիտալիզմի զարգացումը ժխտող, ըստ էության հասարակական առաջընթացը բացասող հակագիտական դրույթին։ Նարոդնիկությանը վճռական հարված հասցնելով հանդերձ, Լենինը սկզբունքորեն տարբերում է հեղափոխական նարոդնիկներին լիբերալ նարոդնիկներից, ցույց տալով, որ վերջինները, հրաժարվելով առաջինների հեղափոխական պայքարի ավանդներից ու ձևերից, դարձել են քաղքենիական բուրժուազիայի ռեակցիոն գաղափարախոսության գործակալները։ Այդ երկում բացահայտված է կապիտալիզմի առաջացմանն ու զարգացմանը կուգընթաց միլիոնավոր մասսաների աղքատացման օրինաչափությունն ու առանձնահատկությունները Ռուսաստանում։ Հարուստ փաստական նյութի հիման վրա ցույց է տրված, որ շուկայի մեծությունը որոշվում է հասարակական աշխատանքի մասնագիտացման աստիճանով. ելակետ ունենալով ժողովրդի սպառման մակարդակի աճի օրենքը, Լենինը հատկապես նշում է հասարակական աշխատանքի արտադրողականության բարձրացման որոշիչ դերը այդ օրենքի իրականացման գործում։ Հենց այստեղ արդեն հան-

դես է դալիս հետագա աշխատություններում իր զարգացումն ստացած լենինյան այն դրույթը, ըստ որի ինչպես ամեն մի արտադրաեղանակի ներսում ցածր աստիճանից բարձրին անցման, այնպես էլ նախորդ տնտեսակարգից հաջորդ ավելի բարձր տնտեսակարգին անցման վճռական գործոնը աշխատանքի արտադրողականության բարձրացումն է՝ հիմնված աշխատանքի միջոցների կատարելագործման վրա։ Այդ տեսանկյունով էլ բացահայտվում է կապիտալիզմի առաջադիմական դերը ֆեոդալիզմի նկատմամբ և սոցիալիստական արտադրաեղանակի առաջադիմական էությունը՝ կապիտալիզմի համեմատությամբ։

• Ելնելով Մարքսի այն դրույթից, որ ընդլայնված վերարտադրության որոշիչ պայմանն է արտադրության միջոցների արտադրության առավել զարգացումը սպառման միջոցների արտադրության համեմատությամբ և վերլուծելով կապիտալի օրգանական կառուցվածքի փոփոխությունը կապիտալիստական պարզ կոոպերացիայում, մանուֆակտուրայում ու ֆաբրիկայում, Լենինը բացահայտում է I և II ստորաբաժանումների անհամաչափ զարգացման էությունը և ցույց տալով, որ ավելի կապիտալ ու աշխատուժ է սպառվում առաջին ստորաբաժանման մեջ, հիմնավորում է, որ ներքին շուկայի զարգացումը ավելի շատ տեղի է ունենում ի հաշիվ արտադրական սպառման։ Արտադրության և սպառման միջև գոյություն ունեցող ու հետզհետե խորացող անտագոնիստական հակասությունը արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր կապիտալիստական եղանակի միջև գոյություն ունեցող կապիտալիզմի հիմնական հակասության արտահայտության կոնկրետ գոյաձևերից մեկն է, որը և պարբերական ճգնաժամերի ու գործազրկության հիմնապատճառն է։ Շարադրելով Մարքսի իրացման թեորիան, Լենինը մերկացնում է նարոդնիկների սխալները. չհասկանալով կապիտալիզմի հիմնական հակասության էությունը և նրանից բխող այն իրողությունը, որ կապիտալիստական արտադրությունը արտադրություն է հանուն հավելյալ արժեքի աճող մասշտաբներով ստացման և յուրացման, նարոդնիկները կապիտալիզմի ժամանակ արտադրության նպատակը համարում էին անձնական սպառումը, որով և «հիմնավորում» էին Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման անհնարին լինելը։ Ցույց տալով գյուղատնտեսության քայքայման պրոցեսի արագացումը 1861 թ. հողային ռեֆորմից հետո և ժամանակակից պրոլետարիատի ու բուրժուազիայի առաջացումն ու ձևավորումը, Լենինը քայլ առ քայլ բացահայտում ու հիմնավորում է կապիտալիզմի օրինաչափական զարգացումը ինչպես Ռուսաստանի արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ։

Ռուսական կոռային տնտեսությունը բնորոշելով որպես ցածր տեխնիկայի վրա հենված բնատնտեսություն, որտեղ ճորտը ունի որոշ արտադրության միջոցներ, ամրացված է հողին և անձնական կախման մեջ է հողատիրոջից։ Լենինը ապրանքային արտադրության զարգացման ու առևտրավաշխառուական կապիտալի գործողության ծավալման ֆոնի վրա պատկերում է ֆեոդալական բնատնտեսության քայքայման բարդ ու բազմերանգ պրոցեսը և այդ հիման վրա կապիտալիստական տնտեսաձևի ու արտադրական հարաբերությունների առաջացումը ֆեոդալիզմի ընդերքում։ Ֆեոդալական ռենտայի ձևերի վերլուծման հիման վրա Լենինը տալիս է ճորտատիրության ծաղման, զարգացման ու անկման էտապների բնութագրումը. աշխատավճարային ռենտան,

կամ կոռն ու բեգարը, տիրապետող ու բնորոշ է կոռային տնտեսության ծագման ու ձևավորման ժամանակաշրջանի համար, բնամթերային ռենտան, կամ բահրան, ֆեոդալիզմի զարգացման ու ծաղկման ժամանակաշրջանում հավելյալ արդյունքի յուրացման հիմնական ձևն է, իսկ դրամական ռենտան բնորոշ է ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիզմի առաջացման ժամանակաշրջանի համար։ Այս, իր տեսակի մեջ եզակի, աշխատության վերջին գլխում Լենինը կատարում է շարադրված հսկայական նյութից բխող տնտեսագիտական ընդհանրացումներ ու քաղաքական եզրակացություններ։ Գրքի տրամաբանական վերջաբանը հանդիսացող՝ կապիտալիզմի միսիային վերաբերող պարագրաֆում նշելով բուրժուական տնտեսակարգի առաջադիմական դերը, Լենինը ընդգծում է այդ տնտեսաձևի պատմականորեն անցողիկ բնույթը և հեղափոխական ճանապարհով սոցիալիզմին անցնելու բնապատմական օրինաչափությունը։

XX դարի սկզբին Լենինը իր գրած ու հրատարակած աշխատություններում շարունակում է Ռուսաստանի տնտեսական դրության վերլուծությունը, վեր հանում նրա տեխնիկա-տնտեսական հետամնացության պատճառներն ու հետևանքները։ Հատուկ ուշադրություն դարձնելով ագրարային հարցի վրա, որը գյուղացիական Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության սուր հարցերից մեկն էր, պաշտպանում է Մարքսի ագրարային ուսմունքը բոլոր կարգի ռեակցիոն թշնամական հարձակումներից, մշակում ու զարգացնում է այն բուրժուա-դեմոկրատական ու սոցիալիստական հեղափոխությունների պատմական ժամանակաշրջանի խնդիրներին համապատասխան։ Այդ աշխատություններում է ձևավորվում գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման երկու ուղիների, հողի նկատմամբ երկու մոնոպոլիայի, հողային ռենտայի մասին ուսմունքը և հողի ազգայնացման լենինյան պլանը։ Հենց այդ աշխատություններում էլ պրոլետարիատի հանճարեղ առաջնորդը անդրադարձել է իմպերիալիզմի առանձին հատկանիշներին պատերազմի ու խաղաղության հարցերի կապակցությամբ։

Կարլ Մարքսի աշխարհայացքի և հատկապես տնտեսական ուսմունքի ամբողջական շարադրանքը և լենինյան հստակ ու խոր գնահատականը տրված է 1914 թ. վերջին հրատարակված «Կարլ Մարքս» աշխատության մեջ։ «Մարքսի տնտեսական ուսմունքի բովանդակությունն է,— գրում է Լենինը,— կապիտալիստական հասարակության արտադրական հարաբերությունների հետազոտությունը նրանց ծագման, զարգացման և անկման պրոցեսում»[2]։ Կապիտալիզմի ուսումնասիրությունը Մարքսը սկսում է ապրանքի վերլուծությունից, որովհետև կապիտալիզմը զարգացած համապարփակ ապրանքային արտադրություն է, ապրանքը կապիտալիստական հարստության գոյաձևն է և որպես կապիտալիզմի տնտեսական բջիջ սաղմնային ձևով արտահայտում է բուրժուական տնտեսակարգի հակասությունները։ Այնուհետև Լենինը մատչելի, բայց գիտական խորությամբ շարադրում է Մարքսի ուսմունքը արժեքի, հավելյալ արժեքի, կապիտալի կուտակման ու կապիտալիստական վերարտադրության և հավելյալ արժեքի բաշխման կոնկրետ ձևերի մասին։ Հոդվածի վերջում, հիմնավորելով բուրժուական հասարակարգի տնտեսական օրենքների գործողության հետևանքով կապիտալիզմից սոցիալիզմին անցման անհրաժեշտությու-

2 Նույն տեղում, հատ. 21, էջ 6։

նը, նա ընդգծում է, որ խոշոր մեքենայական արտադրությունը և աշխատանքի հանրայնացումը հանդիսանում են սոցիալիզմի գլխավոր նյութական հիմքը։

Մարքսիստական քաղաքատնտեսության զարգացումը իր արտացոլումը գտավ իմպերիալիզմի լենինյան տեսության մեջ, որը հիմնականում շարադրվել է 1916 թ. Ցյուրիխում գրված «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» հանճարեղ երկում։ Այդ փոքրածավալ գիրքը իրավացիորեն համարվում է Մարքսի «Կապիտալի» շարունակությունը և պատմական նոր ժամանակաշրջանում սոցիալիստական հեղափոխության տեսության զարգացման նոր փուլի մասին ամենակարևոր տնտեսագիտական երկը։ Այս գործում ամբողջապես երևում է լենինիզմի նորարարական ստեղծագործական բնույթը։ Պատմական նոր պայմանների զարգացման հիման վրա հեղափոխության մտքի ու գործունեության տիտանը որոշում է իմպերիալիզմի ծագման ու ձևավորման փուլերը. առաջինը, որը ընդգրկում է XIX դարի 60-ական թթ. մինչև 1873 թ. տնտեսական գերարտադրության ճգնաժամը, բնորոշ է նրանով, որ արտադրության համակենտրոնացման ու կենտրոնացման հիման վրա մոնոպոլիաներն իրենց բազմաղան ձևերով աճում են սնկի պես, բայց դեռ որոշիչ դեր չունեն տնտեսության ու քաղաքականության մեջ։ Երկրորդ փուլը ընդգրկում է 1873 թ. մինչև XIX դարի վերջը, երբ մոնոպոլիաները տիրապետող գիրք գրավելով տնտեսության բոլոր ճյուղերում, որոշիչ դեր են կատարում թե՛ տնտեսության, թե՛ քաղաքականության մեջ և ազատ մրցակցությունը տեղի է տալիս մոնոպոլիստականի առաջ, որն ավելի քայքայիչ ու կործանարար բնույթ ունի։ Երրորդ փուլը սկսվում է XX դարով, երբ ավարտվում է արդյունաբերական կապիտալիզմից իմպերիալիզմին անցնելու բազմաղան ու բարդ պրոցեսը և իմպերիալիստական պատերազմների իրադրության մեջ ձևավորվում է կապիտալիզմի սիստեմի ընդհանուր ճգնաժամը, որով սկսվում է բուրժուական տնտեսակարգի խարխլումն ու փլուզումը։ Իմպերիալիզմը, ուսուցանում է Լենինը, XIX դարի վերջին երրորդում գիտության ու տեխնիկայի նոր նվաճումների հետևանքով կապիտալիստական արտադրության մինչ այդ չտեսնված արագ զարգացման, համակենտրոնացման ու կենտրոնացման արդասիքն է, որը կապիտալիզմի շարունակությունն ու զարգացման բարձրագույն՝ վերջին փուլն է. հերքելով «մաքուր» իմպերիալիզմի և իմպերիալիզմը որպես տնտեսությունից կտրված զուտ քաղաքականություն հակագիտական դրույթները, Լենինը իմպերիալիզմը բնորոշում է որպես մոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջան, երբ ոչ միայն պահպանվում են բուրժուական տնտեսակարգի բոլոր օրինաչափություններն ու խոցերը, այլև հանդես են գալիս նոր հատկանիշներ, հասարակական-քաղաքական կյանքում որոշիչ դեր խաղացող նոր տնտեսական երևույթներ։ Հարուստ փաստական նյութի հիման վրա շարադրելով ու տնտեսագիտական խոր վերլուծման ենթարկելով իմպերիալիզմի հատկանշական գծերը՝ մոնոպոլիաների տիրապետությունը, ֆինանսական կապիտալի առաջացումն ու ֆինանսական օլիգարխիայի ձևերը, կապիտալի արտահանումը ու գաղութների նոր դերը, միջազգային մոնոպոլիաների առաջացումն ու աշխարհի տնտեսական բաժանումը նրանց միջև, աշխարհի տերիտորիալ բաժանման ավարտումը և պայքարը վերաբաժանման համար (պարբերաբար կրկնվող իմպերիալիստական պատերազմների միջոցով), Լենինը մշակում է աշխարհը վերափոխող և մարդկությանը իմպերիալիզմի արհավիրքներից փրկող սոցիալիստական հեղափոխության ու սոցիալիզմի կառուցման

իր նոր տեսությունը։ Հայտնի է, որ Մարքսն ու Էնգելսը, ապրելով ու գործելով մինչմոնոպոլիստական կապիտալիզմի համեմատաբար «խաղաղ» զարգացման ժամանակաշրջանում, իրավացիորեն զարգացնում էին այն ճշմարտացի ու միանգամայն գիտական, տվյալ դարաշրջանի հասարակական-քաղաքական ուժերի հարաբերակցությունը արտացոլող տեսությունը, ըստ որի սոցիալիստական հեղափոխության հաղթանակը ու սոցիալիզմի կառուցումը հնարավոր է կամ ամբողջ աշխարհում, կամ վճռական նշանակություն ունեցող բոլոր երկրներում միասին վերցրած և անհնար է մեկ առանձին երկրում, որովհետև միավորված ռեակցիոն ուժերը անմիջապես կոչնչացնեն հեղափոխության օջախը։ Պատմությունը հաստատեց իր ժամանակին այդ դրույթի ճշմարիտ լինելը. հայտնի է XIX դարում «Սրբազան միության» կատարած սև գործը բանվորական հեղափոխական շարժումների և 1871 թ. Փարիզի կոմունայի ջախջախման գործում։ Լենինը իմպերիալիզմի ժամանակաշրջանի օրինաչափությունների վերլուծման հիման վրա բացահայտեց կապիտալիզմի տնտեսական ու քաղաքական անհամաչափ զարգացման օրենքի որոշիչ դերը պատմական նոր ժամանակաշրջանում. ցույց տվեց, որ թռիչքաձև զարգացման հետևանքով ուժերի հարաբերակցության փոփոխության հիման վրա բաժանված աշխարհի վերաբաժանման համար մղվող պայքարում և ներքին հակասությունների խորացման ու սրման իրադրության պայմաններում ոչ միայն անհնար է դառնում բոլոր ռեակցիոն ուժերի միավորումը հեղափոխության դեմ, այլև հնարավոր է դառնում տարբեր սիստեմների երկրների ուժերի միավորումը մարդկությանը դեպի կործանում տանող ագրեսիվ ուժերի դեմ, ինչպես, օրինակ, այդ տեղի ունեցավ II համաշխարհային պատերազմում։ Իմպերիալիզմի դարաշրջանում տնտեսական ու քաղաքական անհամաչափ զարգացման օրենքի գործողության հետևանքով տարբեր երկրներում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի ու սոցիալիզմի կառուցման համար անհրաժեշտ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները գտնվում են տարբեր մակարդակի վրա։ Այս բոլորի հիման վրա մեծ Լենինը հանգեց այն միակ գիտական եզրակացությանը, որ իմպերիալիզմի դարաշրջանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը ու սոցիալիզմի կառուցումը հնարավոր է մեկ առանձին երկրում և անհնար է ամբողջ աշխարհում կամ մի խումբ երկրներում միասին վերցրած։ Այս նոր դրույթը ամբողջ աշխարհի սոցիալիստական հեղաշրջման գործում կատարեց Արքիմեդի լծակի դերը, որոշեց Ռուսաստանի պրոլետարիատի ավանգարդային դերը հեղափոխության մեջ, նոր հեռանկարներ բաց արեց միջազգային բանվորական շարժման համար և տվեց միջազգային մասշտաբով սոցիալիզմի հաղթանակի ստրատեգիայի ու տակտիկայի ելակետային սկզբունքները։ Աշխարհը հեղափոխող այդ համաշխարհային պատմական ուսմունքի իրականացումը սկսվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով և այն բոլոր նվաճումները, որ առ այսօր ձեռք են բերվել մեր երկրում ու միջազգային մասշտաբով, նշանավորում են մարքսիզմ-լենինիզմի հաղթարշավը։

Բնորոշելով իմպերիալիզմի պատմական տեղը, Լենինը բացահայտում է նրա էությունը որպես նեխվող, փտող, մեռնող, պարազիտային կապիտալիզմ և պրոլետարական հեղափոխության նախօրյակ։ Իմպերիալիզմի լենինյան տեսությունը այսօր այն զենքն է, որով բացահայտվում են կապիտալիստական իրականության մեջ մեր ժամանակաշրջանում տեղի ունեցող տեղաշարժերի

օրինաչափությունները և որոշվում միջազգային բանվորական շարժման հաղթանակի ուղիներն ու միջոցները։ Այդ տեսակետից պատմական բացառիկ նշանակություն ունի բանվորական և կոմունիստական կուսակցությունների ներկայացուցիչների 1969 թ. Մոսկովյան խորհրդակցությունը, որի որոշումներն ու նյութերը լենինիզմի ստեղծագործաբար կիրառման օրինակ են։ «Իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի խնդիրները արդի էտապում և կոմունիստական ու բանվորական կուսակցությունների, բոլոր հակաիմպերիալիստական ուժերի գործողությունների միասնությունը» խորագրով՝ 1969 թ. հունիսի 17-ին խորհրդակցության կողմից ընդունված հիմնական փաստաթղթում արդի էտապը բնութագրելով որպես մի կողմից հեղափոխական և առաջադիմական ուժերի նոր առաջընթացի հնարավորությունների աճի ժամանակաշրջան, իսկ մյուս կողմից էլ չանտեսելով, որ աճում են իմպերիալիզմի ագրեսիայի ծնունդ հանդիսացող, ժողովուրդներին ճնշելու, խաղաղությանը ու սոցիալական առաջադիմությանը սպառնացող վտանգները, արվում է բոլոր ժողովուրդների շահերն արտահայտող հետևյալ եզրակացությունը. «Ստեղծված իրադրությունը պահանջում է կոմունիստների, բոլոր հակաիմպերիալիստական ուժերի գործողությունների միասնություն, որպեսզի, առավելագույն չափով օգտագործելով բոլոր նրա հնարավորությունները, էլ ավելի լայն հարձակում ծավալվի իմպերիալիզմի վրա, ռեակցիայի ու պատերազմի ուժերի վրա»[3]։ Այնուհետև նշելով, որ համաշխարհային մասշտաբով իմպերիալիզմի ու սոցիալիզմի արմատական հակասությունը խորանում է, փաստաթղթում ընդգծվում է ռեակցիայի գլխավոր հենակետ Ամերիկայի Միացյալ նահանգների ագրեսիվության ուժեղացումը, որը իր սուր ծայրով ուղղված է սոցիալիստական պետությունների դեմ։ Խոսելով բանվորական շարժման և ազգային-ազատագրական շարժման դեմ իմպերիալիզմի ոտնձգությունների մասին, շեշտվում է, որ մեծանում է անդունդը զարգացած կապիտալիստական պետությունների և մեծամասնությունը կազմող մյուս կապիտալիստական երկրների միջև։ Մեր օրերում տեղի ունեցող հասարակական-տնտեսական խոր տեղաշարժերը և պատմության օրինաչափ առաջընթացը հաստատում են, որ, չնայած ռազմական հիստերիային, «իմպերիալիզմը անզոր է վերադարձնելու իր կորցրած պատմական նախաձեռնությունը, հետ շրջելու ժամանակակից աշխարհի զարգացումը։ Մարդկության զարգացման մայրուղին որոշում են համաշխարհային սոցիալիստական սիստեմը, միջազգային բանվոր դասակարգը, բոլոր հեղափոխական ուժերը»[4]։

Հատուկ ուշադրության է արժանի իմպերիալիզմի բուրժուական ու մանր բուրժուական տեսությունների լենինյան քննադատությունը, որովհետև այն իր սուր ծայրով ուղղված է նաև սոցիալիզմի այսօրվա թշնամիների դեմ ու մեկ անգնահատելի ծառայություն է մատուցում ռևիզիոնիզմի, ռեֆորմիզմի, դոգմատիզմի և ընդհանրապես հակակոմունիզմի դեմ մղվող պայքարում։

Մարքսիզմի տնտեսագիտական տեսական գանձարանի հարստացման ու զարգացման գործում հատկապես մեծ են Լենինի ծառայությունները կոմունիստական արտադրաեղանակի քաղաքատնտեսության՝ որպես սիստեմատիկ գիտության, մշակման գործում։ Ելակետ ունենալով Մարքսի ու Էնգելսի արժե-

3 «Սովետական Հայաստան», 1969, 19 հունիսի։
4 Նույն տեղում։

քավոր դրույթները սոցիալիստական արտադրաեղանակի ծագման ու զարգացման օրինաչափությունների մասին և հատկապես «Գոթայի ծրագրի քննադատությունը» գրքում շարադրված հանճարեղ մտքերը, Լենինը, սոցիալիստական հեղափոխության հաղթանակի ու սոցիալիզմի կառուցման սկզբնական փորձի ընդհանրացման հիման վրա, տվեց իր ամբողջական ուսմունքը սոցիալիզմի ծագման ու կառուցման վերաբերյալ։ Հանրահռչակ ապրիլյան թեզիսներում նա բացահայտեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխության սոցիալիստականի վերաճման օրինաչափությունը և մշակեց հեղափոխության ընթացքում այն տնտեսական ու քաղաքական միջոցառումների պլանը, որով ապահովվում էր Փարիզի կոմունայի սխալների չկրկնելը և սոցիալիզմի կառուցումն ու զարգացումը. կոնկրետացրեց ու զարգացրեց Մարքսի ուսմունքը կապիտալիզմից սոցիալիզմին անցման պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ։ Նշելով անցման ժամանակաշրջանի քաղաքական իշխանության բազմազան ձևերի հնարավորությունը, բացահայտեց ու կազմակերպեց նրա հիմնական ձև հանդիսացող սովետական իշխանությունը մեր երկրում։ Մշակեց սոցիալիստական պետության տնտեսական դերի բարդ պրոբլեմները ոչ միայն անցման ժամանակաշրջանի, այլև սոցիալիստական էկոնոմիկայի պայմաններում։ Հայտնի են Լենինի դրույթները արտադրամիջոցների աղգայնացման, նոր տնտեսական քաղաքականության, ինդուստրացման և գյուղի սոցիալիստական վերակառուցման մասին, որոնք հաղթանակի ուղենիշներ հանդիսացան ոչ միայն մեր երկրում, այլև սոցիալիզմի համաշխարհային սիստեմի բոլոր երկրներում սոցիալիստական տնտեսակարգի հաղթանակի համար։ Տնտեսավարման լենինյան այնպիսի հիմունքները, ինչպիսին են՝ պլանաչափ համամասնական զարգացման օրենքի պահանջների իրականացումը ժողովրդական տնտեսության պլանային ղեկավարման միջոցով, տնտեսության կառավարման դեմոկրատական ցենտրալիզմը, տնտեսական պրոցեսների ու երևույթների նկատմամբ գիտական մոտեցումը, տնտհաշվարկային հարաբերությունների կազմակերպումը հօգուտ հասարակական հարստության աճի ու ժողովրդի բարեկեցության բարձրացման, նյութական շահագրգռումը արտադրության զարգացման գործում, սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին վերաճման ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան իրենց նոր իմաստավորումն ու զարգացումն ստացան ՍՄԿԿ XXIII համագումարի հավանությանն արժանացած և հաջողությամբ իրականացվող տնտեսական ռեֆորմում։

Լենինը հատուկ ուշադրություն էր դարձնում գիտատեխնիկական առաջընթացի վրա. նա գիտությունն ու տեխնիկան դիտում էր որպես յուրահատուկ հասարակական երևույթներ, որոնք, ունենալով հարաբերական ինքնուրույնություն, կատարում են որոշակի սոցիալական ֆունկցիա. բացահայտելով գիտության ու տեխնիկայի զարգացման և հասարակական կյանքում տեղի ունեցող տեղաշարժերի օրգանական կապակցությունները, Լենինը տեխնիկական առաջընթացի էությունը տեսնում է հենց նրանում, որ մարդկային աշխատանքը ավելի ու ավելի է տեղի տալիս մեքենայի աշխատանքի առաջ։ Գիտատեխնիկական նվաճումների հիման վրա արտադրության մասնագիտացումն ու կոպերացման միջոցով խոշորացումը Լենինի մոտ որոշիչ նշանակություն ունի կապիտալիզմի նկատմամբ սոցիալիզմի հաղթանակի համար. «Խոշոր մեքենայական արդյունաբերությունը,— գրում է նա,— և նրա փոխադրումը հողա-

գործության մեջ սոցիալիզմի միակ տնտեսական բաղան է, միակ բաղան է հաջողությամբ պայքարելու հանուն մարդկության փրկության կապիտալի լծից, տասնյակ միլիոնավոր մարդկանց փրկության կոտորվելուց ու խեղդվելուց, որ տեղի է ունենում այն հարցը լուծելու համար, թե արդյոք աշխարհի բաժանման մեջ գերակշռություն կունենա Անգլիական դիշատիչը, թե Գերմանականը, Ճապոնականը, թե Ամերիկականը և այլն»[5]։

Կռահելով, որ սոցիալիզմի հաղթանակը մի շարք երկրներում նոր խնդիրներ կառաջադրի համատեղ ուժերով լուծելու համար և ելնելով ուրույն հիմնական դրույթից, որ կոմունիզմը սովետական իշխանությունն է՝ գումարած ամբողջ երկրի էլեկտրիֆիկացիան, Լենինը 1921 թ. անդրադառնալով ֆրանսիական կոմպարտիայի ագրարային հարցի վերաբերյալ թեզիսներին, գրում է. «Առաջավոր տեխնիկան հրամայաբար պահանջում է ամբողջ երկրի էլեկտրիֆիկացումը, և մի շարք հարևան երկրների—մեկ պլանով»[6], «Մեծ նախաձեռնություն» հոդվածում խոսելով տեխնիկայի ու աշխատանքի արտադրողականության հարցերի մասին, Լենինը հետևյալ կերպ էր ձևակերպում իր մտքերը ընդհանրացնող եզրակացությունը. «Կոմունիզմը կամավոր, գիտակից, միավորված, առաջավոր տեխնիկա օգտագործող բանվորների աշխատանքի բարձրագույն արտադրողականություն է կապիտալիստականի համեմատությամբ»[7]։

«Էկոնոմիկան և քաղաքականությունը պրոլետարիատի դիկտատուրայի էպոխայում» աշխատության մեջ վերլուծելով էկոնոմիկայի փոփոխություններն ու քաղաքական ուժերի հարաբերակցությունները սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում, Լենինը գրում է. «Ռուսաստանում աշխատանքը կոմունիստորեն միավորված է այն չափով, որ չափով, նախ՝ վերացված է արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը և երկրորդ՝ որ չափով պրոլետարական պետական իշխանությունը կազմակերպում է համազգային մասշտաբով խոշոր արտադրությունը պետական հողի վրա և պետական ձեռնարկություններում, բաշխում է աշխատող ուժերը տնտեսության զանազան ճյուղերի և ձեռնարկությունների միջև, բաշխում է աշխատավորների միջև պետությանը պատկանող մասսայական քանակությամբ սպառման մթերքները»[8]։ Լենինը բնութագրելով կոմունիստական արտադրաեղանակի առաջին փուլի՝ սոցիալիզմի էությունն ու օրինաչափությունները, զբաղվում է նաև զարգացման հեռանկարային հարցերով։ Սոցիալիզմը, գրում է նա, բնորոշվում է արտադրության միջոցների ընդհանուր տիրապետման և յուրաքանչյուրին ըստ աշխատանքի չափի բաշխման սկզբունքի իրականացմամբ. նա վերացնում է մարդու կողմից մարդու շահագործման բոլոր ձևերը, բայց դեռ իր վրա կրում է կապիտալիզմից ժառանգած ծննդյան խալերը. դեռ մնում են «բուրժուական իրավունքի» անհավասարությունը և նրանից բխող հարստության անարդար տարբերությունները։ Ահա թե ինչու,— շարունակում է Լենինը,— առօրյա էական հարցերի լուծման ընթացքում «Մեր կուսակցությունը ավելի հեռուն է նայում. սոցիալիզմը պետք է անխուսափելիորեն աստիճանաբար վերաճի կո-

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 35։
6 В. И. Ленин, Полное собрание сочинений, изд. 5-е, т. 44, էջ 280։
7 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 524։
8 Նույն տեղում, հատ. 30, էջ 117։

մունիզմի, որի դրոշի վրա գրված է՝ «յուրաքանչյուրը՝ ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր պահանջների»[9]։

Կոմունիստական արտադրաեղանակի երկու փուլերի օրինաչափությունների մասին լենինյան ուսմունքը ամբողջականորեն ու խտացված արտացոլվել է հանրահռչակ «Պետություն և հեղափոխություն» գրքի V գլխում, որտեղ Մարքսի «Ռոթայի ծրագրի քննադատությունը» գրքի մանրակրկիտ կոնսպեկտավորմանը զուգընթաց, հեղափոխության հանճարը շարադրել է իր ուղենշող դրույթները սոցիալիզմի՝ կոմունիզմին վերաճման բարդ ու բազմերանգ հարցերի վերաբերյալ։ Այդտեղ արտահայտված՝ հանրային սեփականության զարգացման, դասակարգերի վերացման, սոցիալիստական արտադրական ձեռնարկությունների կոմունիստական արտադրական ասոցիացիաների վերաճման, սոցիալիստական աշխատանքից կոմունիստականին անցման, դիկտատուրայի ու դեմոկրատիայի, սոցիալիստական բաշխման եղանակից կոմունիստական բաշխմանը անցման, սոցիալիստական վերարտադրության ու արդյունքի բաշխման, պետության մահացման ու համաժողովրդական ինքնավարությամբ փոխարինման, գյուղի ու քաղաքի հակադրության և մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակասության վերացման մասին լենինյան մտքերը կոմունիզմի ծավալուն շինարարության գործում մեր հերոս ժողովրդի ուղին լուսավորող անմար ջահերն են։

---

9 Նույն տեղում, հատ. 31, էջ 85։